

Թշնամին երկիր բերելէ յետոյ, անոր սուրովը բնաջինջ կ'ընէին մեր ժողովուրդը ու կը շարունակէին իրենց գործը, այդ ջնջուած ժողովուրդը ունենալով նիւթ յառաջացող տրամին: Ինծի կու գայ, թէ գաղտագողի, անապահով անցքն է պատճառը սա անճշդութեան, որ չի դադրիր վաւերական իր կնիքէն, բայց կը տպաւորէ հակադիր մարզով: Տեքորի այս անկատարութիւնն է, որ կ'արձագանգէ իր մէջ կատարուած գործողութեանց վրայ ու մեզ կ'ընէ առնուազն մտաշփոթ շատ մը դէպքերու ըմբռնումին մէջը: Կարդացէք, կարկառուն նմոյշի մը համար, Անդրանիկի յուշերը, ու պիտի համոզուիք, թէ այս յիշատակները ոչինչով կը լուսաւորեն անոր կրուողի դէմքն ու դերը: Ամէն ինչ թոյլ է, աղկաղկ, անկազմակերպ, - ծրագիր, գործերակերպ, նախապատրաստութիւն, գործադրութիւն: Այդպէ՞ս՝ նաեւ իրականութիւնը: Չեմ կարծեր, թէ անփութութեան, անճանաչութեան, բախտովի յառաջացման այսքան մեծ մեղքեր ներէին իրենց մարդիկ, որոնք հսկայ դատի մը լուծումը ստանձներ էին: Ինծի կու գայ, թէ գերագոյն անձուկը, որ անոնց բոլորին մէջ կը տիրապետէ, քիչ մըն ալ կ'եղծէ անոնց նայուածքին յստակութիւնը: Ու մարդկային է ասիկա: Այդ հաւատակուռ մարդերուն ուսումնասիրութիւնը, առանց մահուան սպառնալիքին, յեղափոխական շապիւղէն, հանգստաւէտ պայմաններու մէջ անգամ կարօտ է լայն, մանրամասն ճշդումներու, սրբագրումներու: Մեր ուղեւոր մէկ եկեղեցականը, հակառակ պայմաններու նպաստին, աւելի քան չորաւ մարդոց եւ հոգեբանութենէ սեւեռման տեսակէտէն: Մահուան անձուկով ծպտուած, կոյր, միշտ մութին քաղաք մը մտնող ու տուն մը փակուող երիտասարդը, այդ իսկ փաստերով, զուրկ է աչքին անփոխարինելի նպաստէն: Տարածեցէք տեքորը, փոխանակ քաղաքի՝ լեռներուն, իրենց գործածական անցքերէն ու մատչելի թափերէն բռնուած՝ անպաշտօն ուժերով, խաշնարած ցեղերէ, թուրքին չափ վայրագ ու թշնամի, որոնք կը գործեն պաշտօնական ուժերէ ղեկավարուած: